զի անկելոյն ելցէ և մտցէ նա որ էր քաշ աստիճանաւ և ներքոյ նմա, և ամենեքեան ներքոյ անկելոյ առն ելցեն աստիճանէ իւրմէ մի աստիճան 'ի վեր, զի դատարկացի աստիճանն երեք տասան և 'ի տեղի դատարկ աստիճանի ընտրեցեալ լինի այր արժանի 'ի տանէն հայոց և նստցի աթոռ երեք տասան երորդ աստիճան խորհրդակցութեան հրովարտակաւ 'ի տանէն հայոց, ըստ նմանութեան 94. երորդ յօրէնս։

ԳԼՈՒԽ ՂԶ.

'Ի պատճառէ լրումն ժամանակէ իշանելով նախարարն 'ի պաշտօն նախարարութենէ կարի մտանել 'ի պաշտօն տանուտէրութեան, եթէ ժողովուրդ գաւառի իւրոյ տացեն նմա թուղթ փոխանորդութեան և իշեալ 'ի դահէ նախարարութենէ մի լիցի նախատինք մէջ ազգին հայոց, թէ ոչ պատիւ գործոյն նորայ բարեպէս կատարելոյն։

ԳԼՈՒԽ ՂԷ.

'Ի վերայ ամենայն պաշտօնատարի հաստատելով վկայիւք կաշառ առութիւն նորայ իսկոյն անկցի նա 'ի պաշտօնէ իւրմէ և մի երբէք մտցի պաշտօն 'ի ժամանակս կենաց իւրոց։